Շինուհայր

Բնակչությունը՝ 2598
Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 79 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 17 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1480 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Շինուհայրի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Այն Հայաստանի հին բնակավայրերից է, այստեղ առկա են հին հայկական պատմամշակութային հուշարձաններ: Շինուհայրի տարածքում են գտնվում Կուսանաց Անապատի համալիրը, սբ.Աստվածածին եկեղեցին (1676թ.), «Շինուհայր» գյուղատեղին, գերեզմանոցը: Գյուղամիջում է գտնվում սբ.Ստեփանոս եռանավ բազիլիկ եկեղեցին և «Խաչեր» կոչվող գերեզմանոցը, ուր կանգուն է իր ձևով եզակի, 3մ բարձրությամբ կոթող-խաչքարը (1261թ.): Շինուհայրում են ծնվել ՀՍՍՀ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանը, ճանաչված պատմաբաններ՝ Հրաչիկ Սիմոնյանը, Խիկար Բարսեղյանը, Լենդրուշ Խուրշուդյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 5245 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5055 հա, որից՝
- վարելահող՝ 1577 հա, բազմամյա տնկարկ՝ 86 հա, արոտ՝ 2236 հա, այլ հողատեսք՝1156 հա
- բնակավայրերի հողեր՝ 130 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 31 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝8 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 16 հա,
- ջրային հողեր՝ 6 հա: